ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Անի Նազարյան

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Բանալի բառեր- *տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան, վիրտուալ հարթակ, նորագույն տեխնոլոգիաներ և թանգարան:*

Ըստ թանգարանների միջազգային խորհրդի՝ կողմից ընդունված սահմանման՝ թանգարանը մշտական գործող, ոչ առևտրային հաստատություն է, որը ծառայում է հասարակության զարգացմանը և բաց է հանրության լայն շերտերի համար: Այն հավաքում, պահպանում, ուսումնասիրում, զանգվածայնացնում և ցուցադրում է բնության, մարդկության և շրջապատող միջավայրի նյութական վկայությունները՝ կրթական, դաստիարակչական, լուսավորչական և ժամանցային նպատակներով[1]:

Թանգարանների առաքելությունը չի սահմանափակվում միայն վստահված մշակութային կամ բնական ժառանգության պահպանմամբ, նույնքան կարևոր է արդիականացնել և բացահայտել մշակութային ժառանգությունը որպես մերօրյա իրականության մաս, իրազեկել, կրթել և դաստիարակել նոր սերնդին սեփական անցյալի նկատմամբ հարգանքի ոգով՝ ուղղորդելով ստեղծել, վերարտադրել իր անցյալի և ներկայի ժառանգությունը:

Թանգարանների գործունեությանը և փոխակերպումներին վերաբերող թեմայի շուրջ վերջին ժամանակներում մեծ քանակությամբ գրականություն է լույս տեսել, որտեղ հիմնականում քննարկվում են թանգարաններում կիրառվող նորագույն տեխնոլոգիաները և դրանց ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև այն, թե որքանո՞վ են թանգարանները պատրաստ տեղեկատվական տեխնոլոգիաների ներհոսքին և արդյո՞ք կարող են ստեղծել ժամանակի թելադրանքներին համապատասխան ցուցադրություններ և ծրագրեր:[2]

Ա. Թոֆլերը[3], Դ. Բելլը[4], Ի. Մելյուխինը[5] իրենց աշխատություններում անդրադառնում են տեղեկատվական հասարակության սոցիալական և մշակութային փոխակերպումներին, հաղորդակցության միջոցների զարգացմանը: Քննարկում են նաև տեղեկատվական հեղափոխության արդյունքում առաջացած աշխարհի նոր պատկերը: Թանգարաններում նորագույն տեխնոլոգիաների կիրառության ոլորտների թեմային անդրադառնում են նաև մի շարք ռուս հեղինակներ. այդ թվում՝ Иванов Д. В[6], Лебедева Е. А[7], Шубский М. П[8] և այլք:

Старикова Ю. А-ն իր աշխատությունունում քննարկում է թանգարանգիտության արդի հիմնախնդիրները, թանգարանների գործունեությունը և առաքելությունը[9]:

---

[1]Ըստ 1989 թ.ICOM-ի XVI Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված կանոնադրության: http://abc.vvsu.ru/Bowoks/muzeebed/page0001.asp#xex12.04.2015:

[2] Ноль Л.Я., Информационные технологии в деятельности музеев. Учебное пособие, М., 2007.

[3] Тоффлер А. Раса, власть и культура // Новая технократическая волна на Западе. М., 1986. - 286 с.

[4] Белл Д. Социальные рамки информационного общества // Новая технократическая волна на Западе. М., 1986. - С. 330-342.

[5] Мелюхин И. Информационное общество: истоки, проблемы, тенденции развития. -М.: Изд-во Моск. ун-та, 1999. — 208 с.

[6] Иванов Д.В. Виртуализация общества. СПб.: Петербургское Востоковедение, 2000. - 96 с.

[7] Лебедева Е.А. Технология работы учреждений культуры по связям с общественностью // Музей будущего: информационный менеджмент. — М., 2001.-С. 8-22.

[8] Шубский М.П. Новое миропонимание и музейная практика //Красноярские музейные биеннале. Красноярск. 1995.

[9] Старикова Ю. А., Музееведение. Конспект лекций, М., 2006, Приор-издат, 2006.

Գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ աշխատությունների մեծ մասում քննարկվում են թանգարանների փոխակերպման առանձնահատկությունները արևմտյան իրականությունում, առկա են սակավաթիվ աշխատություններ նաև ռուսական իրականությունում թանգարանային գործունեության փոխակերպումների և նորագույն տեխնոլոգիաների ներմուծման վերաբերյալ, սակայն գրեթե բացակայում են հայ իրականության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց թանգարաններ ներմուծման ու ընձեռած հնարավորությունների մասին վերլուծությունները: Չնայած, որ վերոնշյալ հարցերը բավական ակտիվ քննարկվում են գիտաժողովների և սեմինարների ընթացքում: Այս պատճառով էլ ստվերում են մնացել Գյումրու թանգարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանն ու նոր գլոբալ փոփոխությունների պայմաններում մշակույթի առանձին ոլորտ հանդիսացող թանգարանների վրա թողած ազդեցությանը նվիրված ուսումնասիրությունները, որն էլ որոշակիորեն պայմանավորում է հոդվածի արդիականությունը և կարևորությունը:

Թանգարանները իրենց բնույթով ուղղված են հասարակությանը, իսկ մարդկությունը, հեշտությամբ ադապտացվելով կյանքի շարունակական փոփոխություններին, ցանկանում է շրջապատված լինել նոր՝ ժամանակին համընթաց տեխնոլոգիաներով, սա էլ այն հիմնական պատճառներից մեկն է, որի համաձայն թանգարաններին ուղղակի «չի թույլատրվում» խուսափել մարտահրավերներից: Իսկ որո՞նք են դրանք: Պոստմոդեռնը թանգարանների համար բացելով նոր հնարավորություններ, միևնույն ժամանակ եղավ կորուստների և փորձությունների ժամանակաշրջան: Մշակութային տրանսֆորմացիաների արդյունքում թանգարանային ոլորտի փոփոխությունները անխուսափելի են: Պոստմոդեռնի ժամանակաշրջանում թանգարանային ոլորտում առաջացած խնդիրները փորձագետ Չ. Ջենկսը բնութագրում է նրանով, որ թանգարանները ի սկզբանե չեն եղել ամբողջական օրգանիզմ, այլ միավորել են մի քանի տարբեր ինստիտուտներ[1]: Արդեն 18-րդ դարում թանգարանը ձեռք բերեց նոր գործառույթ՝ կրթա-դաստիարակչական: Թանգարանը ստացավ առաքելություն կրթել սերունդներին՝դարերի ընթացքում ստեղծված լավագույն նմուշների միջոցով: Այն գործառույթները, որ թանգարանը ձեռք է բերել պոստմոդեռնի արդյունքում, լիովին համապատասխանում են ժամանակակից հասարակության պահանջներին: Թանգարանն, ընդլայնելով իր գործունեության ոլորտները, վերաճել է այլընտրանքային կրթություն, ժամանց, հանգիստ, ինչպես նաև մշակութային քաղաքականություն ձևավորող և իրականացնող բազմաշերտ կառույցի:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառկությունը թանգարանային ոլորտում:

Տեղեկատվական և գիտական հեղափոխության դարում թանգարանները ստիպված են հետ չմնալ այն փոփոխություններից, որոնք համակել են մարդկությանը, որպիսի կարողանան մրցակցային առաջարկ ստեղծեն ազատ ժամանցի մնացած տեսակների կողքին՝ թատրոն, կինո, համացանց, առևտրա-ժամանցային կենտրոններ և այլն: Թանգարանները այն հաստատություններն են, որոնք ունեն և՛ մարդկային, և՛ նյութական, և՛ մշակութային համապատասխան ռեսուրսներ նոր՝ ժամանակին համընթաց առաջարկ ստեղծելու: Հին գործիքները այլևս արդյունավետ չեն և նոր, կրեատիվ, ինտերակտիվ ձևերի անհրաժեշտություն կա: Արդեն ժամանակն է, որ թանգարանները նոր մեթոդներ մշակեն և իրագործեն: Ժամանակի մարտահրավերները բազմազան են, և թանգարանները՝ որպես հասարակական, մշակութային, սոցիալական կառույցներ պետք է համապատասխանեն ժամանակի պահանջներին:

Արդի տեխնոլոգիաների զարգացումը զգալիորեն փոխել է թանգարանային ոլորտը՝ նպաստելով գործառույթների և հնարավորությունների ընդլայնմանը: Մեր ժամանակներում թանգարանը՝ պոտենցիալ այցելուներին առավել մատչելի և հետաքրքիր ներկայացնելու համար, թանգարանները լայնորեն օգտվում են համացանցային հնարավորություններից: Տեխնոլոգիական դարաշրջանում թանգարանային կառույց-

[1] Дженкс Ч. Зрелищный музей – между храмом и торговым центром. Осмысление противоречий // ПИНАКОТЕКА. 2000. № 12. с. 5.

ների գործունեությունն ու դերն աստիճանաբար փոխվում է: Տեխնոլոգիաների կիրառման կարևոր ոլորտ է ցուցադրությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է ստեղծել ավելի գրավիչ և ինտերակտիվ միջավայր: Թանգարան-այցելու երկխոսություն ապահովելու հնարավորություն են ընձեռում նաև էլեկտրոնային կրպակները, որոնք տեղադրված են Գյումրու բոլոր թանգարանների նախասրահներում: Սրանց միջոցով այցելուն կկարողանա տեսնել չցուցադրված նմուշները, կարող է նաև մասնակցել հետաքրքիր մրցույթների և այլն: Սակայն դրված օրվանից ի վեր ոչ մի թանգարանում չեն գործարկվել: Իսկ այն հարցին, թե ինչու՞ մինչ այժմ ոչ մի թանգարանում դրանք չեն ծառայում իրենց նպատակին, մի պարզ պատասխան էր հնչում, որ չունեն բավարար ֆինանսական միջոցներ համապատասխան ծրագիրը գնելու համար: Իհարկե, դա որոշակիորեն պայմանավորված է նաև աշխատակիցների դեպի նորագույն տեխնոլոգիաները և նորամուծությունները ունեցած ‹‹անտարբեր և անվստահ›› վերաբերմունքով:

Հաջորդ ոլորտը, որը բացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ՝ համացանցն է: Գրեթե բոլոր թանգարաններն ունեն ինտերնետային կայք, որտեղ զետեղվում են տեղեկություններ նրանց պատմության, գործունեության և նորությունների մասին: 1993թ.-ը շրջադարձային եղավ թանգարանների և տեղեկատվական տեխնոլոգիաների համագործակցության ոլորտում. browser-ի ի հայտ գալը կարգավորեց համացանցի ֆունկցիոնալությունը, որի զարգացմանը համընթաց փոխվեց նաև թանգարանների կառուցվածքն ու բնույթը [1] : Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներմուծումը թանգարանային ոլորտ սկսվեց հենց 1990-ական թվականներից, ինովացիոն գործընթացները դարձան անխուսափելի և կանխատեսելի: Հայաստանյան թանգարանների վեբ-կայքերի պատրաստման գործընթացում մեծ դեր ունի Կառավարությունը, որի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ շահագործվել են մի շարք թանգարանների վեբ-կայքեր, այդ թվում նաև Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի բնության պետական թանգարանի և մի շարք այլ թանգարանների վեբ-կայքեր:

Մշակութային ծառայությունների որակի և մատչելիության ապահովման նպատակով կառավարությունն սկսել է մշակույթի ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ներդրումը, մասնավորապես՝

- **Թանգարանային ոլորտում** ստեղծվել է նոր վեբ կայք և ապահովվել էլեկտրոնային շտեմարաններ պարունակող սենսորային կրպակների տեղադրումը,
- **Արվեստի բնագավառում** կառավարությունն սկսել է արվեստի գործերի և թանգարանային առարկաների թվայնացման և համացանցում դրանք ներկայացնելու գործընթացը: Արդեն լուսանկարվել և թվայնացվել է 8000 գործ Հայաստանի պետական պատկերասրահի հավաքածուից, և կայքը բաց է այցելուների համար[2]:

Բայց այսօր Հայաստանում դեռևս կան թանգարաններ, որոնք ինտերնետային կայք-էջեր չունեն:

Գյումրիում գործող 8 թանգարաններից իրենց ինտերնետային կայք-էջերը ունեն միայն Սերգեյ Մերկուրովի և Հովհաննես Շիրազի տուն-թանգարանները և Շիրակի երկրագիտական թանգարանը: Կայք էջերի պարագայում շատ կարևոր է հասանելիության, հավաստիության և արդիականության ապահովումը:

Ճիշտ կազմակերպված թանգարանային կայքը այցելուին կարող է պարգևել էսթետիկական, կրթական, գիտական բավարարվածություն և հետաքրքրություն առաջացնել թանգարանի հանդեպ: Այժմ անդրադառնանք այդ ինտերնետային կայքերի նկարագրմանը և վերլուծմանը:

---

[1] Юлаева Н.О., Научно-исследовательская работа музеев, С-П., 2005, с. 29.
[2] Մշակույթ, http://report.gov.am/?id=25, 01.03.17:

Հովհաննես Շիրազի տուն-թանգարանի պաշտոնական ինտերնետային կայքն[1] ունի 9 պատուհան՝ գլխավոր էջ, թանգարանի մասին, Հ. Շիրազի մասին, կարծիքներ, միջոցառումներ, տեսանյութ, վիրտուալ թանգարան, աշխատակազմ, հետադարձ կապ անվանումներով: Գլխավոր էջ պատուհանում տեղեկություններ են սպասվելիք միջոցառումների մասին: Թանգարանի մասին պատուհանում, բացի թանգարանի մասին տեղեկություններից, կան նաև հայտնի մարդկանց կարծիքները: Հաջորդ պատուհանում կարող ենք ծանոթանալ Հ. Շիրազի կյանքին և գործունեությանը: Կարծիքներ բաժնում Շիրազի մասին հայտնիների, ընկերների կարծիքներն են: Միջոցառումներ պատուհանում զետեղված են արդեն իրականացված ծրագրերը և լուսանկարներ: Տեսանյութերը մի քանիսն են. հիմնականում ասմունքներն են և մի տեսանյութ ‹‹Թանգարանների գիշեր›› միջոցառումից: Աշխատակազմ բաժնում ներկայացված են աշխատողների պաշտոնները և անունները: Հետադարձ կապ անվանումով պատուհանում առկա է քարտեզ, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե, ֆեյսբուքյան էջի հղումը և ֆաքսը: Կայքի ինֆորմացիան հասանելի է հայերեն և անգլերեն և կա հետադարձ կապի հնարավորություն: Կայքում թարմացումները հազվադեպ են իրականացվում, որի արդյունքում կայք-էջից դուրս են մնում թանգարանում իրականացվող միջոցառումների, թանգարանային առօրյային վերաբերող տեղեկատվությունները:

Շիրակի երկրագիտական թանգարանի պաշտոնական կայք-էջը[2] հասանելի է չորս լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն: Ունի վեցը պատուհաններ՝ պատմություն, թանգարանի պատմություն, հավաքածու, գործունեություն, կատալոգ, օգնություն: Սակայն առանձին՝ աջ անկյունում, կան ֆոտոալբոմ, վիդեոալբոմ, ցուցահանդեսներ, հրատարակություններ բաժինները:

Պատմություն պատուհանում ներկայացված է Շիրակ գավառի պատմությունը, թանգարանի պատմություն բաժնում՝ թանգարանի մասին ինֆորմացիա, հաջորդ պատուհանում հավաքածուն է ներկայացված, կատալոգ պատուհանում ներկայացված են մոտ 620 ցուցանմուշներ: Կայքում հնարավոր է տեսնել նաև պեղավայրերի հատակագծերը, համագործակիցներին և լուսանկարները: Կայքը առավել գիտական և մասնագիտական է:

Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարանի կայք էջը[3] հասանելի է միայն ռուսերենով: Առաջին պատուհանը՝ Добро пожаловать в музей, ներկայացնում է թանգարանի արտաքին տեսքը լուսանկարով և քարտեզը, նշված է նաև հասցեն, աշխատաժամերը և հեռախոսահամարը: История պատուհանում ներկայացված են Ս. Մերկուրովի կյանքն ու գործունեությունը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության: Фотографии պատուհանում հեղինակի լուսանկարներն են: Գործում են նաև коллекция և новости պատուհաններ: Սրանցից առաջինում ներկայացված են ստեղծագործական երեք առանձին բաժիններ՝ маски, письма, пресса: Առաջին ենթապատուհանում ներկայացված են հայտնի քաղաքական, հասարակական գործիչների, գիտնականների 21 մահվան դիմակներ, այդ թվում Խրիմյան Մկրտիչ, Ս. էյզենշտեյն, Ա. Տոլստոյ, Մ. Գորկի, Վ. Լենին, Ա. Ժդանով, Գ. Օրջոնիկիդզե և այլոց: Ներկայացված գործիչներից տասնմեկի մասին կա կարճ տեղեկատվություն, որը կցված է Վիկիպեդիային, մնացած 10-ի դեպքում նշված է միայն անունը և ծննդյան ու մահվան թվականները: Լուսանկարները հնարավոր է մեծացնել և մանրամասն դիտել: Հնարավորություն կա թողնել մեկնաբանություն: Երկրորդ ենթապատուհանում Ս. Մերկուրովի նամակն է ուղղված Ի. Ստալինին, որտեղ նա խնդրում է Ստալինի իր հրամանների մասին տեղյակ պահել, թե ինչպե՞ս և ի՞նչ հագուստով է ուզում լինի իր քանդակը: Նամակի վրա նաև Ստալինի պատասխանն է և ստորագրությունը: Վերջին ենթապատուհանում ներկայացված են թերթերի մեջ եղած նորությունները: Դրանք նույնպես հնարավոր է մեծացնել և կարդալ:

[1] Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, http://www.shiraz.am:
[2] Շիրակի երկրագիտական թանգարան http://www.shirakmuseum.am/:
[3] Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարան http://merkurov.am/:

Վերջին՝ новости պատուհանում թարմացվում են լուրերը, ոչ միայն Հայաստանում եղած ցուցահանդեսների և միջոցառումների, այլ նաև Հայաստանից դուրս: Կայքում կա փնտրելու հնարավորություն և կցված է ֆեյսբուքյան էջը: Կայք-էջի ինֆորմացիան չի թարմացվել և հնարավորություն չկա դիտելու կայանալիք միջոցառումների ցանկը:

Այսօր համացանցը ամենատարածված միջոցն է որոնումներ անելու և անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար: Հետևաբար, մասնավորապես, թանգարանների դեպքում, որոնք քաղաքի մշակութային դիմագիծը ներկայացնող հաստատություններ են, առավել կարևոր է հստակ, ստույգ տեղեկատվության ապահովումը համացանցում:

Գյումրու թանգարանների դեպքում հաղորդվող տեղեկատվությունը սահմանափակվում է 8-15 տողերի շրջանակներում, որտեղ նշված է թանգարանների հասցեները, հեռախոսահամարները, աշխատանքային օրերերը և ընդհանուր տեղեկություններ թանգարանների և ցուցադրվող նմուշների վերաբերյալ: Հաղորդվող տեղեկատվության շեշտը դրված է կառույցի, ճարտարապետական հորինվածքի մեկնաբանման վրա և ակնարկի ձևով նշվում է, որ այժմ թանգարաններ են: Կայքերում թանգարանների մասին տեղեկատվությունը կաղում է և որոշ դեպքերում նույնիսկ չի համապատասխանում իրականությանը: Կան շարադասական, քերականական սխալներ, սխալներ կան նաև թանգարանների բնույթի և անվանումների կիրառման մեջ: Կայքերում Ասլամազյան քույրերի պատկերասրահը ներկայացված է, որպես Ասլամազյան քույրերի տուն-թանգարան, սակայն սա քույրերի տունը չի եղել և այն պատկերասրահ է, որտեղ ներկայացված են միայն նրանց աշխատանքները, և չկա հուշային հատված: Թանգարանի ենթակայության տակ գտնվող ցուցանմուշների թիվը չափազանցված է՝ հասցնելով մինչև 700-ի, այն ինչ ընդամենը 619-ն են: Հ. Շիրազի տուն-թանգարանի մասին տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, այստեղ նշվում է թանգարանի բացումը՝ 1975 թ., իսկ երկրաշարժից հետո վերաբացումը՝2002 թ., որոնք երկուսն էլ սխալ են, թանգարանը բացվել է 2003 թ.-ին: Չիթողցյանների տուն-թանգարանի անվանումը սխալ է նշվում՝ Ազգային ճարտարապետութան և Գյումրիի կենցաղի թանգարան, մինչդեռ պետք է լիներ Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան:

Վիկիպեդիայում *առկա են առանձին հոդվածներ՝ Գյումրու 6 թանգարանների մասին: Չկա հոդված Կումայրի արգելոց-թանգարանի և Ս. Մերկուրովի հուշատուն-թանգարանի մասին: Ա. Իսահակյանի թանգարանի մասին հոդվածը համապատասխանում է իրականությանը և հասանելի է միայն հայերեն: Այս հոդվածում ներկայացված է թանգարանի պատմությունը և կան լուսանկարներ: Չիթողցյանների տուն-թանգարանի մասին հոդվածը հասանելի է նաև անգլերեն, ներկայացված է պատմությունը և որոշ լուսանկարներ, բայց ոչ ցուցասրահներից: Մ. Մկրտչյանի, Հ. Շիրազի տուն-թանգարանները, Ասլամազյան քույրերի պատկերասրահը և Շիրակի երկրագիտական թանգարանի մասին նյութը հասանելի է միայն հայերեն, ներկայացված է թանգարանների պատմությունը, ցուցադրությունը և որոշ լուսանկարներ: Առկա են սխալներ և վրիպակներ՝ կապված ցուցադրությունների հետ: Սխալ է նշված նաև Չիթողցյանների տուն-թանգարանի հասցեն: Վիքիպեդիայի Գյումրի քաղաքի մասին պատմող հոդվածում թանգարաններին անդրադարձ չկա:*

Այսպիսով՝ վերլուծելով Գյումրու թանգարանների վերաբերյալ համացանցում առկա տեղեկատվությունը՝ կարող ենք նշել, որ այս ուղղությամբ լուրջ քայլեր չեն արվում և շրջանառվող ինֆորմացիան, որը գրեթե չի համապատասխանում իրականությանը դուրս է մնում վերահսկողությունից: Նշված ոչ մի կայքում թանգարանները ամբողջությամբ չեն ներկայացված չեն, չկա ոչ մի կայք, որտեղ հստակ և ստույգ ինֆորմացիա լինի գործող ութ թանգարանների մասին: Այսօր, որոնման համակարգում ամենամեծ պահանջարկ ունեցող Վիկիպեդիա կայքում Գյումրու թանգարանների մասին հոդվածներ առկա են միայն հայերենով /բացառությամբ՝ Չիթողցյանների տուն-թանգարանի/, որը սահմանափակում է լսարանը՝ հաղորդակից դառնալով միայն հայ լսարանի հետ: Եվ բացի այդ թույլ են տրված կոպիտ սխալներ, ընդհուպ մինչև

թանգարանի հասցեի սխալ հղում: Մնացած կայքերում վրիպակներ կան թանգարանների անվանումների, բացման տարեթվերի, բնույթի և ցուցադրության սկզբունքների հետ կապված:

Ընդհարնացնելով Գյումրու թանգարաններում նորագույն տեխնոլոգիաների կիրառման խնդիրը՝ կարող ենք ասել, որ թանգարանային կայք-էջերը ընդհանուր պատմական տեղեկություններ են հաղորդում, և կաղում է թանգարանի ցուցադրության, գնացուցակի մասին տեղեկատվություն: Կայքերում չի նշվում մուտքի արժեքը, չկա ինֆորմացիա նաև այն մասին, թե ինչ լեզուներով է իրականացվում էքսկուրսիան: Սրանք այն հիմնական և կարևոր տեղեկություններ են, որոնք առաջինը կցանկանա տեսնել հետաքրքրված պոտենցիալ այցելուն: Կայք-էջերում ոչ լիարժեք է ներկայացվում նաև ցուցադրության մասին ինֆորմացիան, Հ. Շիրազի թանգարանի կայք-էջում ընդհանրապես ներկայացված չէ ցուցադրությունը, չկան նաև նկարներ, միգուցե, այդ ամենը կոմպենսացվում է վիրտուալ թանգարանի առկայությամբ: Շիրակի երկրագիտական թանգարանում առկա է ինֆորմացիա ցուցադրության մասին և կան նաև լուսանկարներ: Նույն պատկերն է նաև Ս. Մերկուրովի թանգարանի կայք-էջում: Ոչ մի թանգարանի կայք-էջում չկա տեղեկատվություն գնացուցակի և էքսկուրսիային լեզուների վերաբերյալ: Կայք-էջի այցելուն չի կարող տեղեկություն ստանալ այն մասին, թե ի՞նչ լեզուներով են կազմակերպվում էքսկուրսիաները, ինչը ամենակարևոր և անհրաժեշտ ինֆորմացիան է ցանկացած այցելուի համար:

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի դարում սա անթույլատրելի և անընդունելի է, համացանցը օնլայն հարթակ է՝ անհրաժեշտ ինֆորմացիան ստանալու համար, որը Գյումրու թանգարանների պարագայում մատուցվում է ոչ ճիշտ, խեղաթյուրված, ոչ ամբողջական և հասանելի է միայն նեղ լսարանի համար: Այսպիսով՝ Հայաստանում թանգարանային մշակույթի վիրտուալ ձևերի առկայությունը և նորագույն տեխնոլոգիաների ներմուծմանն ուղղված քայլերը սոսկ ձևականություն են թվում, սակայն կա այն պոտենցիալը, որը հնարավորություն կտա ձևավորելու վիրտուալ մշակույթի կուլտուրա:

Ани Назарян, Музеи г. Гюмри в виртуальном пространстве,-Статья посвящена проблеме использования новейших информационных технологий в музеях на примере музеев г. Гюмри. Во всем мире музеи проходят период трансформации, возникают новые требования к музеям, и исходя из этого, и необходимо понять, насколько гюмрийские музеи готовы и способны соответствовать им.

Таким образом, цель данной статьи – всесторонний анализ места музеев г. Гюмри, провозглашенным в 2013 году культурной столицей СНГ, в виртуальном пространстве. В рамках полевого исследования были затронуты, следующие темы:

- Тенденции модернизации Гюмрийских музеев,
- Информация о Гюмрийских музеях в виртуальном пространстве,,
- Преимущества и недостатки импорта информационных технологий на примере гюмрийских музеев.

Анализируя деятельность гюмрийских музеев, можно выделить несколько общих для всех музеев проблем

- недостаток финансовых средств,
- недостаток соответствующих специалистов,
- проблемы связанные с ремонтом зданий,
- стереотипные, однообразные, застывшие экспозиции,
- не профессиональный подход к музейной деятельности,
- ограниченное применение новейших технологий.

В свете последнего пункта можно отметить формальное отношение к необходимости наличия детальной виртуальной информации о музеях. Анализируя также имеющуюся информацию о гюмрийских музеях в виртуальном пространстве, мы можем отметить, что в

этом направлении не делается серьезных шагов не существует ни одного сайта, где была бы представлена полная, выверенная, контролируемая и опостоянно обновляемая информация по музеям Гюмри.

Ключевые слова- Гюмри, музей, информационные технологии.

Ani Nazaryan, Museums of Gyumri in virtual sphere,-The article is aimed at the problem of using innovative information technologies in museums in the case of museums of Gyumri. All over the world museums undergo the process of transformation and try to respond to new challenges. The article is going to see whether the Gyumri museums are ready and able to respond these challenges. The field research has addressed the following issues:

- Modernization trends in the Gyumri museums,
- ONline information about the museums of Gyumri,
- Advantages and disadvantages of using innovative information technologies in museums, in the case of Gyumri museums

The research has revealed number of specific problems, common to all museums in Armenia.

- Insufficient finances,
- Lack of proper specialists,
- Problems with recondition of buildings,
- Obsolete and petrified exhibitions,
- Unprofessional approach to museum work,
- Limited use of new technologies

As far as the last point is concerned, just a formal attitude to a necessity of having of detailed information of a museum in the Internet has been observed. No serious steps are done in this regard, there is no website providing full, verified, controlled and constantly updated information on the Gyumri museums.

Keywords: Museum, Gyumri, information technologies.